




Իրավաբանների հայկական
ասոցիացիա



Հայաստանի ՔՀԿ-ների
հակակոռուպցիոն կոալիցիա

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ
արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի
կանխարգելմանն ուղղված ուսումնասիրություն

Իրավաբանների հայկական ասոցիացիայի և
ՔՀԿ Հակակոռուպցիոն Կոալիցիայի
փորձագետ Առնոլդ Վարդանյան

ԵՐԵՎԱՆ – 16.12.2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Հիմնախնդիր 1	6
Հիմնախնդիր 2	10
Հիմնախնդիր 3	14
Հիմնախնդիր 4	15
Հիմնախնդիր 5	19
Առաջարկությունների ամփոփում.....	20

Ներածություն


Դեռևս 1984 թվականի դեկտեմբերի 10-ին Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից թիվ 39/46 բանաձևով ընդունված «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման դեմ» վերտառությամբ կոնվենցիան (այսուհետ՝ նաև Կոնվենցիա) միջազգային իրավական հարթակում հանդիսանում է այն հիմնարար փաստաթուղթը, որի կենսագործման երաշխիքն անդամ պետությունների կողմից ինչպես օրենսդրության վերանայումն է, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի վերաիմաստավորումը՝ խոշտանգումը, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքն առհասարակ բացառելու համար:

Հիշյալ միջազգային իրավական Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է 1993 թվականին, իսկ Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը 2006 թվականին:

Խոշտանգումների բացարձակ արգելքի և այդ կապակցությամբ պետության ստանձնած պոզիտիվ պարտականությունն արձանագրված է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից՝ հիմք ընդունելով Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածը, որի համաձայն՝ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից 2001 թվականից ի վեր, երբ Հայաստանի Հանրապետությունը ստորագրեց, իսկ այնուհետև նաև վավերացրեց «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիան, Հայաստանի Հանրապետության կողմից արձանագրված խախտումների ընդհանուր թվի 20 տոկոսը վերաբերվել է Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտմանը:

Այսպես, եթե խոշտանգումները կազմել են 2 տոկոս, ապա դաժան կամ անմարդկային վերաբերմունքի դրսևորման դեպքերը կազմել են 15 տոկոս, իսկ արդյունավետ քննության



կապակցությամբ թույլ տրված խախտումները 3 տոկոս: Ընդ որում, եթե ուսումնասիրենք ընդդեմ Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների Եվրոպական դատարան ներկայացված դիմումները, որոնք դեռևս քննության չեն առնվել դատարանի կողմից, ապա եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի ենթադրյալ խախտման վերաբերյալ ներկայացված դիմումներն ընդհանուր թվով 9-ն են:

Հիշյալ 9 դիմումների բովանդակության ուսումնասիրությունն էլ վկայում է այն մասին, որ դիմումատուները բարձրացնում են խոշտանգումների, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պատժի ենթարկվելու ենթադրյալ խախտումների հարցը, որոնց մի մասն իրենց պնդմամբ դրսևորվել է ինքնախոստովանական ցուցմունք կորզելու նպատակով, իսկ պետության կողմից ստանձնած պոզիտիվ պարտականությունների շրջանակներում արդյունավետ քննություն չի կազմակերպվել, որոշ դեպքերում քրեական պատասխանատվության չեն ենթարկվել քրեական օրենքով արգելված արարք կատարած անձինք:


Անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ ինքնին խոշտանգումների արգելքն ունի հիմնարար բնույթ (միջազգային իրավունքի մակարդակում համարվում է *jus cogens* նորմ), որի ամրագրումը նույնիսկ սահմանադրության մակարդակով դեռևս բավարար չի կարող համարվել կոնվենցիայից բխող պարտավորությունների պատշաճ կատարումը երաշխավորելու համար (տե՛ս Aisling Reidy, *The prohibition of torture, A guide to the implementation of article 3 of the convention on human rights*, էջ 8-9):

Հետևաբար, «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման դեմ» կոնվենցիայի վավերացմամբ ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ոչ միայն տեքստային առումով ՀՀ օրենսդրության համապատասխանեցումը Կոնվենցիայով ամրագրված նորմերին, այլ նաև գործնական առումով համապատասխան երաշխիքների ամրագրումն ինքնին խոշտանգումների, և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման նպատակով:

ՀՀ կողմից «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման դեմ» կոնվենցիայի վավերացումից 9 տարի անց՝ 2015 թվականի հունիսի 9-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված ՀՕ-69-Ն օրենքով՝ «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» վերտառությամբ, ապահովվեց քրեաիրավական հարթությունում ՀՀ օրենսդրության համապատասխանեցվածությունը

Կոնվենցիայով ամրագրված նորմերին: Այսպես, ընդունված օրենքով խոշտանգման քրեաիրավական հանցակազմը վերափոխվեց ՀՀ քրեական օրենսգրքում ի համեմատություն մինչ այդ օրենքն ընդունելը գործող խմբագրությամբ օրենսգրքի 119-րդ հոդվածում ամրագրված խոշտանգման հասկացությունն արտացոլող հանցակազմի, որտեղ որպես վերջինիս օբյեկտիվ կողմի հատկանիշներ նշված էր այնպիսի գործողություն կատարելը, որի միջոցով ա) դիտավորյալ կերպով անձին պատճառվում է ուժեղ ցավ կամ մարմնական կամ հոգեկան տառապանք, բ) էթե դա չի առաջացրել անձի առողջությանը դիտավորությամբ ծանր կամ միջին ծանրությամբ վնաս պատճառելու հետևանքներ: Այդ հոդվածի

կապակցությամբ ընդհանուր⁵ վիճակագրության ուսումնասիրությունը վկայում է, որ դեռևս 2012 թվականին քննվել և դատավճիռ է կայացվել ընդհանուր թվով 5, 2013 թվականին՝ 2, 2014 թվականին՝ 3, 2015 թվականին՝ ևս 3 քրեական գործերով:



Ընդ որում, անհրաժեշտ ենք

համարում նշել, որ մինչ նոր փոփոխությունների և լրացման կատարումը՝ ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված իրավակարգավորումների պայմաններում խոշտանգման տեսական օբյեկտը համարվում էր մարդու առողջության անվտանգության ապահովման կապակցությամբ ծագող հասարակական հարաբերությունները:

Մինչդեռ, Կոնվենցիայի 1-ին հոդվածի ուսումնասիրությունը վկայում է, որ ինքնին խոշտանգումը համարվում է պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություն, քանի որ խոշտանգման միջազգային իրավական հասկացությունն ընդգրկում է պաշտոնատար անձ հանդիսացող կամ պետախիշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի կողմից կամ նրա դրդմամբ, կարգադրությամբ կամ գիտությամբ որևէ անձի դիտավորությամբ ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը՝ այդ կամ երրորդ անձից տեղեկություն կամ խոստովանություն ստանալու նպատակով կամ այն արարքի համար պատժելու նպատակով, որն այդ կամ երրորդ անձը կատարել է կամ որի կատարման մեջ կասկածվում կամ մեղադրվում է, ինչպես նաև այդ կամ երրորդ անձին վախեցնելու կամ որևէ արարք կատարելուն կամ կատարումից ձեռնպահ մնալուն հարկադրելու

նպատակով կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ցանկացած պատճառով: Հիշյալ հատկանիշները կրող հանցակազմի ձևով էլ խոշտանգումը 2015 թվականի հունիսի 9-ին ընդունված օրենքով ամրագրվեց ՀՀ քրեական օրենսգրքում, որի վերաբերյալ դեռևս վիճակագրություն չի ձևավորվել:

Այնուամենայնիվ, հիշյալ օրենքի ընդունումը մեր համոզմամբ դեռևս բավարար չէ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դրսևորման կանխարգելումն ինչպես օրենսդրական, այնպես էլ իրավակիրառ մակարդակներով երաշխավորելու համար:

Այդ դիրքորոշումը պայմանավորված է հետևյալ հանգամանքով: Հիշյալ օրենքի ընդունմամբ ՀՀ օրենսդրությունում ըստ էության խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դրսևորումն արգելող Կոնվենցիոնալ դրույթն արտացոլվել է միայն նյութական իրավունքում, սակայն դատավարական իրավունքում դեռևս չեն ձեռնարկվել անհրաժեշտ և բավարար միջոցառումներ համապատասխան երաշխիքներ ամրագրելու, թափանցիկության և հրապարակայնության սկզբունքները երաշխավորելու համար:

Մինչդեռ, այդ սկզբունքների հիման վրա անհրաժեշտ է ամրագրել ինստիտուցիոնալ և գործառնական փոփոխություններ, որոնք ինքնին կկանխարգելեն խոշտանգումների, դաժան, անմարդկային, նվաստացուցիչ վերաբերմունքի դրսևորումը դրանց արտահայտման հենց սկզբնական պահին:

Հիմնախնդիր 1

Այսպես, առաջին հերթին գործող իրավակարգավորումների պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով երաշխավորված չէ բերվածի դատավարական կարգավիճակ ունեցած անձի բժշկական օգնություն ստանալու (բժշկական զննության ենթարկվելու) իրավունքը:

Խոշտանգման հանցակազմի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն դրսևորվելու ռիսկային հավանականությունն առավելապես բարձր է լինում անձի՝ արգելանքի վերցվելու սկզբնական պահին: Մասնավորապես, այդ ընթացքում է, որ անձը գտնվելով նյարդահոգեբանական լարված վիճակում կարող է խոստովանական ցուցմունք տալ պետաիշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի ոչ իրավաչափ ներգործության արդյունքում:

Թերևս գաղտնիք չէ, որ գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքն առհասարակ որևէ կերպ չի ամրագրում անձի հիմնարար իրավունքներն արգելանքի տակ վերցնելու սկզբնական պահին: Այդ բացը չնայած փորձել է լրացնել ՀՀ վճռաբեկ դատարանը Գազիկ Միքայելյանի վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 18-ին կայացված թիվ ԵԱԴԴ/0085/06/09 որոշմամբ, սակայն մեր համոզմամբ տրված կարգավորումը լիարժեք չէ և չի կարող հանդիսանալ լուրջ երաշխիք խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորման կանխարգելումն արգելանքի տակ վերցվելու սկզբնական փուլում ապահովելու համար:

ՀՀ վճռաբեկ դատարանը նշված որոշմամբ ամրագրել է, որ բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ բերվածը պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով. ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը, (բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին, (գ) հրավիրելու իր փաստաբանին, (դ) լռելու:

Հիշյալ իրավունքները ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ինկորպորացվել են ամերիկյան և ընդհանրապես միջազգային իրավաբանության ձևավորման հիմքում ընկած հանրաճանաչ «Միրանդայի կանոններ»-ից, որոնք մշակել է ԱՄՆ Գերագույն դատարանը 1966թ-ի որոշմամբ՝ Միրանդան ընդդեմ Արիզոնայի գործով:

Սակայն, 21-րդ դարի 2-րդ տասնամյակում այդ կանոնների նույնաբովանդակ կիրառումն այլևս ժամանակավրեպ է, քանի որ այդ իրավունքների ցանկն էականորեն ընդլայնվել է և իր մեջ ուղղակիորեն պետք է պարունակի նաև անձի բժշկական զննության ենթարկվելու իրավունքը:

Այդ իրավունքն անգլոսաքսոնական իրավական համակարգ ունեցող երկրներում ամրագրվել է դեռևս 1980-ական թվականներին: Այսպես, Մեծ Բրիտանիայում դեռևս 1984 թվականին ընդունված «Ոստիկանության և քրեական ապացույցների մասին» ակտն ամրագրել է, որ ոստիկանության ծառայողը պարտավոր է անհապաղ դիմել բժշկական մասնագետին, երբ արգելանքի վերցված անձը ա) տառապում է ֆիզիկական ցավերից, բ) վնասվածք ունի, գ) տառապում է հոգեկան խանգարմամբ, դ) բժշկական ուշադրության կարիք ունի:

Հետագայում, հիշյալ իրավունքը նաև ամրագրվել է այլ երկրների, այդ թվում հետխորհրդային երկրներում ընդունված քրեական դատավարության օրենսգրքերում: Այսպես, 2009 թվականին ընդունված Վրաստանի քրեական դատավարության

օրենսգիրքը 38-րդ հոդվածի 2-րդ մասում երաշխավորում է արգելանքի վերցված անձի բժշկական համապատասխան օգնության (ըստ էության՝ նաև զննության) իրավունք:

Հայաստանի Հանրապետությունում նույնպես անձի բժշկական զննության ենթարկվելու իրավունքի ամրագրումը հրամայական է խոշտանգումների, դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման նպատակով: Իսկ այդ իրավունքի ապահովման բեռը պետք է կրի իրավակարգն ապահովող պաշտոնատար անձը (վարույթն իրականացնող մարմինը), որն ըստ էության բխում է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1979 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 34/169 բանաձևով ընդունված «Իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձանց վարվելակերպի կանոնագրքի» 6-րդ հոդվածից: Այն ամրագրում է, որ իրավակարգը պաշտպանող պաշտոնատար անձինք լիովին ապահովում են ձերբակալվածների առողջության պաշտպանությունը, մասնավորապես, անհապաղ միջոցներ են ձեռք առնում անհրաժեշտության դեպքում բժշկական օգնություն ապահովելու համար:

Մինչդեռ, գործող իրավակարգավորումների պայմաններում՝ ՀՀ կառավարության 2007 թվականի հունիսի 14-ի թիվ 818-Ն որոշումը՝ «Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումից բխող՝ ծանուցման ենթակա իրավունքների ցանկը և ծանուցման կարգը հաստատելու մասին», նշում է, որ անհրաժեշտության դեպքում ազատությունից զրկված մարդն իրավունք ունի ստանալու բժշկական օգնություն, ընդ որում այդ իրավունքն այլ իրավունքների հետ մեկտեղ պետք է բանավոր անձին պարզաբանվի նրա ազատությունը սահմանափակելու պահին, որի մասին արձանագրություն չի կազմվում (այն կազմվում է ուստիկանությունում), իսկ իրավունքների գրավոր տեսքով ծանուցում տրամադրվում է միայն այդ անձի ցանկությամբ:

Այսինքն, նախ, Հայաստանի Հանրապետությունում անձի ազատությունը սահմանափակելիս պարզաբանման (ծանուցման) ենթակա իրավունքների ցանկը սահմանվում է ենթաօրենսդրական ակտով, որն անթույլատրելի է, քանի որ ՀՀ կառավարության որոշումը չի կարող հանդիսանալ ՀՀ քրեական դատավարության իրավունքի աղբյուր ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն:

Բացի այդ, հիշյալ որոշումը որևէ երաշխիք չի ամրագրում, որ անձի իրավունքներն ամբողջությամբ պարզաբանվել են իրեն: Իսկ ինչ վերաբերվում է բժշկական զննության ենթարկվելու իրավունքին, ապա այն առհասարակ

երաշխավորված չէ, քանի որ ենթաօրենսդրական ակտի բովանդակությունից ըստ էության հետևում է, որ այն միայն ամրագրում է առաջին բժշկական օգնություն ստանալու իրավունքը, որը չի կարող նույնացվել բժշկական զննության ենթարկվելու իրավունքի հետ:

«Ձերբակալված և կալանավորված անձանց մասին» ՀՀ օրենքը, որը դեռևս 2002 թվականից՝ ընդունման պահից, ըստ էության որևէ արմատական փոփոխության չի ենթարկվել, 13-րդ կետի 4-րդ մասում ամրագրում է, որ ձերբակալված (կամ կալանավորված) անձն ունի առողջության պահպանման, այդ թվում՝ ստանալ բավարար սնունդ, անհետաձգելի բժշկական օգնություն, ինչպես նաև զննվել իր ընտրած բժշկի կողմից իր դրամական միջոցների հաշվին:

Նման կարգավորումն ուղղակիորեն հակասում է արդեն իսկ վկայակոչված միջազգային փաստաթղթերով ամրագրված պահանջներին, քանի որ խոշտանգումների, անմարդկային վերաբերմունքի հայտնաբերումն ու կանխարգելումն առնչվում է պետության կողմից ստանձնած պոզիտիվ պարտականություններին, մինչդեռ հիշյալ կարգավորումը ազատությունից զրկված անձին իր հայեցողությամբ և իր ֆինանսական միջոցների հաշվին բժիշկ ընտրելու հնարավորություն է նախատեսում, որպեսզի ենթարկվի բժշկական զննության:

Մեր համոզմամբ, խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման նպատակով գործող քրեական դատավարության օրենսգրքում ուղղակիորեն պետք է ամրագրել արգելանքի տակ վերցվելու սկզբնական պահին անձի իրավունքների ցանկը բժշկական զննության ենթարկվելու իրավունքի հետ մեկտեղ (այդ թվում՝ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան ամրագրելով անձի՝ «բերված»-ի կարգավիճակը):

Մինևույն ժամանակ, կարևոր ենք համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ ինքնին անձի բժշկական զննության ենթարկվելու իրավունքի ամրագրումը չպետք է կրի վերացական բնույթ, այլ այդ իրավունքի հետ մեկտեղ անձի համար պետք է ապահովված լինի՝ ա) անկախ հիմունքներով ընտրված բժշկի կողմից զննության ենթարկվելու իրավունքը, բ) բժշկական զննության ենթարկվելու արդյունքում ձևավորված եզրակացության գաղտնիության ապահովումը քրեական վարույթն իրականացնող մարմնից: Հակառակ պարագայում, տվյալ երաշխիքի ամրագրումը կդառնա անարդյունավետ խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ

արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելումն ապահովելու տեսանկյունից:

Նշենք նաև, որ արգելանքի վերցվելուց հետո բժշկական զննության ենթարկվելու անձի հիմնարար իրավունքը երաշխավորված է նաև ներկայումս ՀՀ Ազգային ժողովի հինգերորդ գումարման յոթերորդ նստաշրջանի օրակարգում գտնվող ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 110-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով: Սակայն, պետք է նկատի ունենալ, որ այդ նախագծի ընդունման ժամկետներն անորոշ են, իսկ բժշկական զննության ենթարկվելու անձի իրավունքի երաշխավորումն օրենսդրական մակարդակով ներկայումս կրում է խիստ անհրաժեշտություն՝ Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումն իրավակիրառ պրակտիկայում ապահովելու համար:

Նշված հանգամանքը գնահատելիս պետք է նկատի ունենալ, որ դեռևս 2010 թվականի մայիսին «Հայաստանի Հանրապետությանը խոշտանգումների և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման Եվրոպական կոմիտեի (CPI) Հայաստան կատարված այցելության վերաբերյալ» կազմված գեկոյցում նշվել է, որ Հայաստանի Հանրապետությունը պետք է օրենսդրական մակարդակով երաշխավորի բժշկական զննության ենթարկվելու անձի իրավունքը, ինչը դեռևս ի կատար չի անվել:

Հիմնախնդիր 2

Անձին արգելանքի վերցնելու սկզբնական ժամանակահատվածում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման նպատակով հաջորդ առաջարկությունը վերաբերվում է անձին արգելանքի վերցնելու պահի էլեկտրոնային ամրագրումը:

Գործող իրավակարգավորումների պարագայում անձին արգելանքի վերցնելու պահին ամրագրվում է բացառապես անձին բերման ենթարկելու մասին արձանագրությամբ համապատասխան իրավապահ մարմնի աշխատակցի կողմից: Ընդ որում, օրենքն ըստ էության որևէ իրավական հետևանք չի առաջացնում այդ արձանագրությունն առավել ուշ կազմելու համար:

Նույնիսկ գործող իրավակարգավորումների, ՀՀ վճռաբեկ դատարանի, ՀՀ սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների

պարագայում ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ ձերբակալման առավելագույն 72 ժամի խախտմամբ (կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու համար) անձին դատարանի առջև կանգնեցնելն ըստ էության որևէ իրավական հետևանք չի ունենում քրեական վարույթի հետագա ընթացքի նկատմամբ (անձն ընդամենը քաղաքացիական դատավարության կարգով փոխհատուցում ստանալու հնարավորությունից է կարողանում օգտվել):

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանը՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից թիվ ՄԴՈ-827 որոշմամբ արտահայտված այն իրավական դիրքորոշումը, որ ձերբակալումը և կալանավորումն ինքնուրույն դատավարական հարկադրանքի միջոցներ են, որդեգրել է այն մոտեցումը, որ ձերբակալման առավելագույն 72 ժամի խախտմամբ ձերբակալված անձին դատարան ներկայացնելիս դատարանը կարող է քննել անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորումը կիրառելու վերաբերյալ քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը (տե՛ս Հրանտ Գյուրջյանի վերաբերյալ 2010 թվականի մայիսի 4-ի թիվ ԵԷԴ/0004/06/09 գործով կայացված որոշումը):

Այսինքն, գործող իրավակարգավորումների և ձևավորված իրավակիրառ պրակտիկայի պարագայում քրեական վարույթն իրականացնող մարմինը հնարավորություն ունի անձին արգելանքի վերցնելու պահից (որն անկողմնակալ դիտորդի համար վստահելի եղանակով ամրագրված չէ) մինչև անձին դատարան ներկայացնելու պահն անորոշ ժամկետով անձին պահել անազատության մեջ՝ նրա մասնակցությամբ կատարելով անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողություններ:

Նման մոտեցումը մեր համոզմամբ անթույլատրելի է, այն պարունակում է խոշտանգումների, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ենթարկվելու ռիսկեր և ուղղակիորեն հակասում է միջազգային իրավական փաստաթղթերով ամրագրված պահանջներին, միջազգային փորձին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն *Ladent v. Poland* գործով 72-րդ կետում հայտնել է, որ դատարանի առջև կանգնելու Եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված անձի իրավունքը նպատակ է հետապնդում կանխելու իրավապահ մարմինների կողմից կատարած չարաշահումները, անձի նկատմամբ հնարավոր վատ վերաբերմունքի դրսևորման ձևերը:

«Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) 2011 թվականի մարտի 25-26-ը, Ստրասբուրգում ընդունած

թիվ CDL (2010) 141rev իրավունք գերակայության մասին զեկույցում նշել է, որ իրավական որոշակիության (res judicita) սկզբունքի ապահովումը լրացուցիչ երաշխիք է մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու, կամայականությունները կանխարգելու տեսանկյունից:

Մեր համոզմամբ անձին արգելանքի տակ վերցնելու սկզբնական ժամանակաշրջանի կապակցությամբ օրենսդրական կարգավորումների ամրագրումն իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան հնարավորություն կընձեռի առավելագույնս կանխարգելելու խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորումները:

Այդ մոտեցումն են որդեգրել նաև արտասահմանյան այն բոլոր երկրները, որոնք վերջին տարիներին ընդունել են միջազգային չափանիշներին համապատասխան քրեական դատավարության օրենսգրքեր:

Այսպես, 2012 թվականին ընդունված Ուկրաինայի նոր քրեական դատավարության օրենսգրքի 186-րդ հոդվածում ամրագրվել է, որ անձին կալանավորելու մասին քննիչի միջնորդությունը քննարկվում է դատարանի կողմից ոչ ուշ, քան 72 ժամվա ընթացքում անձին փաստացի արգելանքի վերցնելու պահից:

Բացի այդ, 2009 թվականին ընդունված Վրաստանի նոր քրեական դատավարության օրենսգրքի 206-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրվել է, որ դատախազը միջնորդություն է ներկայացնում դատարան՝ անձի նկատմամբ որպես խափանման միջոց կալանավորման կիրառումը քննարկելու համար, ոչ ուշ, քան անձին արգելանքի վերցնելուց 48 ժամվա ընթացքում:

Հիշյալ մոտեցումը որդեգրված է ոչ միայն ԱՊՀ երկրների մեծ մասում, այլ նաև օրինակ մերձբարձրության երկրներում, որտեղ նույնիսկ անձին արգելանքի տակ պահելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել 48 ժամը (տե՛ս Էստոնիայի քրեական դատավարության օրենսգրքի 217-րդ հոդվածը):

Անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ անձին արգելանքի տակ վերցնելու պահի և դատարան ներկայացնելու պահի միջև ընկած ժամանակային հատվածը պետք է իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան կարգավորվի ներպետական օրենսդրությամբ, որը հնարավորություն կընձեռի ուղղակիորեն կանխարգելել խոշտանգումների, դաժան, անմարդկային և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորումները: Այդ դրսևորումների արտահայտման առավել մեծ ռիսկայնությունը վերաբերվում է հենց անձին արգելանքի տակ վերցնելու սկզբնական ժամանակահատվածին:

Հիշյալ ժամանակահատվածի սկիզբը պետք է ամրագրվի էլեկտրոնային սարքերի միջոցով, որի կապակցությամբ նաև համապատասխան առաջարկություն է ներկայացվել Միավորված ազգերի կազմակերպության խոշտանգումների դեմ կոմիտեի կողմից թիվ CAT/C/ARM/QPR/4 փաստաթղթում:

Ինչ վերաբերվում է դատարան ներկայացվելու առավելագույն ժամկետին, ապա այդ ժամկետը պետք է իրավական որոշակիության սկզբունքին համապատասխան ամրագրվի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

Այս կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում վկայակոչել ՀՀ Ազգային ժողովի հինգերորդ գումարման յոթերորդ նստաշրջանի օրակարգում գտնվող ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում տեղ գտած իրավակարգավումները, որոնք ամրագրվել են միջազգային փորձին համահունչ եղանակով:

Մասնավորապես, նախագծի 109-րդ հոդվածը հնարավորություն է տալիս ձերբակալվածին մեղադրանք ներկայացնել եւ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը լուծելու համար դատարան տանել ոչ ուշ, քան ձերբակալման պահից 60 ժամվա ընթացքում: Ընդ որում, եթե ձերբակալվածը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման:

Մեր համոզմամբ, նման իրավակարգավորումը, որն ուղղակիորեն հակասում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների հիման վրա ներկայումս ձևավորված իրավակիրառ պրակտիկային, հանդիսանում է լուրջ երաշխիք խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հնարավոր դրսևորումները կանխարգելելու համար:

Ոստի, նկատի ունենալով, որ նախագծի ընդունման ժամկետներն անորոշ են, գտնում ենք, որ պետք է համապատասխան օրենսդրական փոփոխությունների արդյունքում ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում նախատեսել այնպիսի իրավակարգավորում, որն իրավական որոշակիության սկզբունքին կհամապատասխանեցնի անձի սկզբնական արգելանքի տակ գտնվելու ժամանակահատվածը:

Միևնույն ժամանակ, խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման նպատակով մեր համոզմամբ խիստ կարևոր նշանակություն ունի օրենսդրական մակարդակով ամրագրումը, որ անձի նկատմամբ ոպես խափանման միջոց`

կալանավորումը կիրառելու հարցը քննարկելիս, դատարանն իմպերատիվորեն պետք է նաև քննարկման առարկա դարձնի անձի ձերբակալման իրավաչափության հարցը:

Հիշյալ հանգամանքն ունի խիստ կարևոր նշանակություն, որը ներկայումս ձևավորված իրավակիրառ պրակտիկայի պարագայում կյանքի է կոչվում միայն այն դեպքում, երբ անձը համապատասխան բողոք է ներկայացնում դատարան՝ վիճարկելով իր ձերբակալման իրավաչափությունը կամ կալանավորման վերաբերյալ միջնորդության քննության ընթացքում բարձրացնում այդ հարցը:

Մինչդեռ, նման մոտեցումն ընդունելի համարվել չի կարող: Թե՛ տեսական գրականության (տե՛ս Петрухин И.Л. Неприкосновенность личности и принуждение в уголовном процессе М.1989г, “Ограничения свободы личности при заключении под стражу”), թե՛ պրակտիկայում կայացվող դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ անձի իրավունքի և ազատությունների հիմնարար խախտումներն առավելապես արտահայտվում են անձին բերման ենթարկելու – ձերբակալելու – կալանավորելու համար դատարան միջնորդություն ներկայացնելու եռամիասնական շղթայի ընթացքում, հետևաբար դատական հետագա վերահսկողությունն առաջին երկու փուլերի համար պետք է կրի իմպերատիվ բնույթ՝ պետաիշխանական լիազորություններով օժտված իրավապահ մարմինների կողմից դրսևորվող չարաշահումները կանխարգելելու համար:

Հիմնախնդիր 3

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման նպատակով հաջորդ քայլը պետք է լինի պետության կողմից այդ կապակցությամբ ստանձնած բողոքների, դիմումների արդյունավետ քննության կազմակերպումը:

Այսպես, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը Եվրոպական կոնվենցիայի 3–րդ հոդվածի կապակցությամբ բազմիցս արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ անդամ պետությունները պետք է ձեռնարկեն ակտիվ միջոցառումներ անձանց կողմից խոշտանգումների, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին ներկայացված հաղորդումների քննության ուղղությամբ:

Մասնավորապես, կոնվենցիայի 3–րդ հոդվածի շրջանակներում նախատեսված արգելքն անդամ պետություններից պահանջում է, որպեսզի վերջիններս արդյունավետ

հետաքննություններ անցկացնեն այն դեպքերում, երբ անձը պնդում է, որ իր նկատմամբ անմարդկային վերաբերմունք են դրսևորել համապատասխան պաշտոնատար անձինք: Այդ հետաքննությունը (ինչպես որ կոնվենցիայի 2-րդ հոդվածով նախատեսված կյանքի իրավունքի խախտման դեպքում) պետք է կարողանա հանգեցնել մեղավորների բացահայտմանն ու պատժմանը:

Հիշյալ դիրքորոշումները համադրելով գործող քրեադատավարական իրավակարգավորումների հետ անհրաժեշտ ենք համարում նշել, որ այն դեպքում, երբ անձի կողմից ներկայացվում է համապատասխան բողոք կամ դիմում, որը կարող է վկայել Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով ամրագրված պահանջների խախտման մասին, ապա հիշյալ բողոքի կամ դիմումի կապակցությամբ քրեական գործի հարուցումն իրավակիրառ պրակտիկայում պետք է ողջամտորեն կրի իմպերատիվ բնույթ:

Այսինքն, քրեական վարույթ նախաձեռնելու (քրեական գործ հարուցելու) իրավագործությամբ օժտված մարմինները պետք է գիտակցեն, որ պետությունը կրում է պոզիտիվ պարտականություն և պատասխանատվություն Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով սահմանված պահանջների կատարման համար: Ուստի, հիշյալ հոդվածով ամրագրված պահանջների խախտման վերաբերյալ ներկայացված հաղորդումներն իրենց բնույթով երբևէ չպետք է մնան անհետևանք:

Ը ն դ ո բ ու մ , խ ո շ տ ա ն գ ու մ ն եր ի , դ ա ժ ա ն , ա ն մ ա ր դ կ ա յ ի ն կ ա մ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկվելու կապակցությամբ ներկայացված հաղորդումների հիման վրա հարուցված քրեական գործերի կարճումը, կասեցումը, քրեական հետապնդման չիրականացումը պետք է դիտարկվի որպես բացառիկ միջոց: Այդպիսի հանցագործությունների քննությունը պետք է իրականացվի առավելագույնս կարճ ժամկետներում, համապատասխան մասնագիտական պատրաստվածություն ունեցող քննչական խմբերի կողմից:

Միևնույն ժամանակ, այդ կապակցությամբ գտնում ենք, որ ներպետական օրենսդրությամբ ամրագրվեն նաև քրեական հետապնդման առավելագույն ժամկետներ, որոնց լրացուցիչ երկարաձգումը պետք է նույնպես պետք է կրի բացառիկ բնույթ և պայմանավորված լինի այնպիսի օբյեկտիվ պատճառներով, ինչպիսիք կարող է լինել օրինակ փորձաքննություն նշանակված լինելու և համապատասխան եզրակացությունը դեռևս ստացած չլինելու հանգամանքը:

Հիմնախնդիր 4

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման նպատակով հաջորդ քայլը պետք է լինի օրենսդրական մակարդակով համապատասխան պահանջի ամրագրումն առ այն, որ քննչական գործողությունների իրականացման ընթացքը պետք է տեսաձայնագրվի քննիչի կողմից: Խոսքն առավելապես վերաբերվում է քննիչի կողմից ազատությունից զրկված անձի, կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կամ մասնակցությամբ իրականացվող քննչական գործողություններին:

Այսպես, անհրաժեշտ է օրենսդրական մակարդակով ամրագրել, որ հարցաքննության, քննման, խուզարկության, քննչական փորձարարության, ազդարարման ընթացքը պարտադիր ենթակա են տեսաձայնագրման և այն դեպքում, երբ տեսաձայնագրման կրիչը կբացակայի կամ տեսաձայնագրությունը որևէ կերպ մոնտաժված կլինի, ապա ձեռք բերված ապացույցը պետք է ճանաչվի անթույլատրելի:

Ներկայումս, ՀՀ քննչական կոմիտեի կողմից մշակվել է համապատասխան օրենսդրական նախագիծ, որը նախատեսվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ, որոնց արդյունքում քննիչին հնարավորություն կընձեռնվի քննչական գործողությունն իրականացնել կա՛մ ընթերակաների մասնակցությամբ, կա՛մ տեսաձայնագրման միջոցով:

Մեր համոզմամբ նման մոտեցումն ընդունելի համարվել չի կարող խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կանխարգելման տեսանկյունից, քանի որ այդ դեպքում քննիչին ընձեռնվելու է այնպիսի երկրնտրանքի հնարավորություն, որի դեպքում ակնհայտ է, թե որն է ընտրվելու խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի առկայության դեպքում:

Ընդհանրապես, պատմահամեմատական ուսումնասիրություն կատարելու դեպքում պարզ է դառնում, որ ընթերակաների ինստիտուտի կիրառման հնարավորությունը գալիս է դեռևս Ցարական Ռուսաստանի ժամանակաշրջանից, որը հետագայում զարգացում է ապրել խորհրդային տարիների ընթացքում: Ընթերակաների էությունը կայանում էր նրանում, որ հասարակությունը կարողանում էր մասնակցել արդարադատության իրականացմանը, ապահովվում էր անկողմնակալ դիտորդի առկայությունը կոնկրետ քննչական գործողության իրականացման պահին՝ որպես երաշխիք անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար:

Սակայն, ներկայումս՝ 21-րդ դարի 2-րդ տասնամյակում, երբ սրընթաց կերպով զարգացում են ապրում տեխնոլոգիական սարքերը, կարծում ենք, որ ընթերակայի ինստիտուտը դարձել է ավելորդ և այն պետք է վերացնել, այլ ոչ թե նախատեսել որպես այլընտրանք:

Հիշյալ դիրքորոշումը պայմանավորված է նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ հասարակությունը երբեք էլ զրկված չէ արդարադատության իրականացմանը մասնակցելու հնարավորությունից՝ հաշվի առնելով, որ քրեական գործերով դատական քննությունն իրականացվում է բաց և հրապարակային եղանակով:

Գտնում ենք, որ ներկայումս պետք է օրենսդրական մակարդակով պետք է ամրագրել քննչական գործողությունների ընթացքը տեսաձայնագրելու իմպերատիվ պահանջ՝ այդ կերպ ապահովելով նաև այդ քննչական գործողության իրավաչափությունը հետագայում՝ քրեական գործն ըստ էության քննության առնելիս, գնահատելու հնարավորություն:

Մասնավորապես, ներկայացնենք հետևյալ օրինակը. երբ քննիչը բնակարանում խուզարկություն կատարելու միջնորդություն է ներկայացնում դատարան, ապա դատարանն այդ միջնորդության նկատմամբ նախնական դատական վերահսկողություն իրականացնելիս գնահատում է հետևյալ հանգամանքները.

ա) արդյո՞ք միջամտությունը ներկայացվել է «օրենքին համապատասխան»,

բ) արդյո՞ք միջամտությունը հետապնդում է իրավաչափ նպատակ,

գ) արդյո՞ք այն անհրաժեշտ է «ժողովրդավարական հասարակությունում» այդ նպատակին հասնելու համար, այլ կերպ՝ ապահովված է արդյո՞ք համաչափություն՝ հետապնդվող նպատակի համեմատությամբ:

Այն դեպքում, երբ դատարանը կրավարարի միջնորդությունը և քննիչը կիրականացնի խուզարկություն, որի ընթացքը նաև կտեսաձայնագրի, ապա խուզարկության արդյունքում ձեռք բերված ապացույցի թույլատրելիությունը գնահատելիս (ըստ էության հետագա դատական վերահսկողություն իրականացնելիս) դատարանը հնարավորություն կստանա «կենդանի» եղանակով վերարտադրելու խուզարկության բուն ընթացքը: Հիշյալ հանգամանքը հնարավորություն կտա քրեական վարույթի ընթացքում ապահովել ինչպես թափանցիկություն, այնպես էլ հրապարակայնություն, որն իր հերթին կնպաստի խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի բացառման:

Եթե փորձենք ուսումնասիրել արտասահմանյան երկրների քրեական դատավարությամբ ամրագրված իրավակարգավորումները, ապա կարող ենք նշել, որ

հետխորհրդային երկրներն (օրինակ՝ Ուկրաինայի 2012 թվականին ընդունված նոր քրեական դատավարության օրենսգրքում) ընդհանուր առմամբ իրենց ներպետական օրենսդրությամբ ամրագրում են ընթերակաների կիրառումը և որպես այլընտրանք առաջարկում քննիչներին կիրառել քննչական գործողության տեսաձայնագրումը, ինչն արդեն իսկ նշել ենք, որ արդարացված մոտեցում համարվել չի կարող:

Մինչդեռ, առաջադեմ, օրինակ՝ մերձբալթյան երկրներում ոչ միայն քննչական գործողությունների իրականացման ընթացքն է տեսաձայնագրվում, այլ ինքնին քննչական գործողությունն է իրականացվում էլեկտրոնային եղանակով (օրինակ՝ skype համակարգի միջոցով): Ի տարբերություն մայրցամաքային իրավական համակարգ ունեցող երկրների, համանման եղանակով քննչական գործողությունները տեսաձայնագրվում են նաև անգլոսաքսոնական իրավական համակարգ ունեցող երկրներում (ԱՄՆ, Անգլիա և այլն), որտեղ ընթերակայի ինստիտուտ առհասարակ գոյություն չի ունեցել: Ընդ որում, այդ երկրներում տեսաձայնագրման միջոցով քննչական գործողություններ իրականացնելու, այսինքն՝ ապացույցներ ձեռք բերելու, հնարավորությունից օգտվում են ոչ միայն հետաքննություն իրականացնող բյուրոյի քննիչները, այլ նաև հենց փաստաբանները, ովքեր օրենքով չարգելված բոլոր եղանակներով ունեն նոր ապացույցներ հավաքելու հնարավորություն:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման նպատակով խիստ կարևոր նշանակություն ունի հարցաքննությունների ընթացքի տեսաձայնագրումը, որի ընթացքում տեսանելի կլինի հարցաքննության տևողությունը, հարցաքննության պայմանների ապահովվածությունը, հարցաքննության ընթացքում ներկա գտնվող անձանց քանակը, առաջադրվող բոլոր հարցերի բնույթն ու բովանդակությունը:

Բացի այդ, կարևոր նշանակություն ունի ոստիկանության և կալանավայրերի հարցաքննության սենյակներում համապատասխան տեսաձայնագրող սարքերի տեղադրումը, որը նույնպես կհանդիսանա քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից հնարավոր ոչ իրավաչափ վարքագիծը կանխող լրացուցիչ երաշխիք:

Ընդ որում, այդ մասին նաև նշված է Միավորված ազգերի կազմակերպության խոշտանգումների դեմ կոմիտեի թիվ CAT/C/ARM/QPR/4 փաստաթղթում, որտեղ նույնպես ուղղակիորեն առաջարկվել է տեսաձայնագրող սարքեր տեղադրել Հայաստանի Հանրապետությունում ոստիկանության և կալանավայրերի հարցաքննության սենյակներում:

Հիմնախնդիր 5

Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի կանխարգելման նպատակով հաջորդ քայլը պետք է լինի օրենսդրական մակարդակով համապատասխան պահանջի ամրագրումն առ այն, որ արագացված դատական քննության կարգի կիրառումն արգելվում է բոլոր այն դեպքերում, երբ այդպիսի կարգ կիրառելու միջնորդություն ներկայացնելու հետ մեկտեղ անձը նշում է, որ իրեն խոշտանգել են, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արժանացրել, կամ այդ հանգամանքների առկայությունը բխում է քրեական գործի ուսումնասիրությունից:

Ընդ որում, պետք է ամրագրել, որ յուրաքանչյուր դեպքում, երբ ամբաստանյալը ներկայացնում է արագացված դատաքննության կարգ կիրառելու միջնորդություն, ապա մինչ ներկայացված միջնորդության բովանդակային քննությանն անցնելը դատավորը պետք է պարզի միջնորդողից, թե արդյո՞ք նա ենթարկվել է խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, թե ոչ, հավելելով նման տեղեկատվության հայտնումը չի կարող որևէ բացասական հետևանքներ առաջացնել միջնորդությունը ներկայացնող ամբաստանյալի համար:

Մասնավորապես, հիշյալ կարգավորման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ արագացված դատական քննություն կիրառելու դեպքում դատարանը չիրականացնելով քրեական գործի նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով հետազոտում և կայացնելով մեղադրական դատավճիռ՝ չի անդրադառնում, բովանդակային առումով քննություն չի իրականացնում խոշտանգումների, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի վերաբերյալ ենթադրվող հատկանիշների առկայությունը հնարավոր բացահայտող ապացույցներին:

Այս կապակցությամբ նշենք, որ որդեգրված մոտեցումը թե՛ անգլոսաքսոնական իրավական համակարգ ունեցող երկրներում (ԱՄՆ, Անգլիա և այլն), թե՛ ռոմանոգերմանական իրավական համակարգ ունեցող հետխորհրդային երկրներում, որոնք վերջին տարիներին ընդունել են միջազգային չափանիշներին համապատասխան նոր քրեական դատավարության օրենսգիրք (տե՛ս օրինակ 2009 թվականին ընդունված Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածը) մինևույնն է: Մասնավորապես, խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ

արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի հայտնաբերման և կանխարգելման նպատակով նշվում է, որ համագործակցության և համաձայնեցման (ըստ էության նույն արագացված դատական քննության) վարույթների կիրառումն արգելվում է համապատասխան տեղեկատվության առկայության պարագայում:

Այն նպատակ է հետապնդում կանխելու հնարավոր խոշտանգումների, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դրսևորումների կոծկման հնարավորությունը:

Առաջարկությունների ամփոփում

Այսպիսով, ամփոփելով սույն ուսումնասիրության շրջանակներում բարձրացված իրավական հարցերը՝ առաջարկում ենք.

1) օրենսդրական մակարդակով երաշխավորել արգելանքի վերցվելու հենց սկզբնական փուլում բժշկական զննության ենթարկվելու անձի իրավունքը, այդ թվում՝ ա) անկախ հիմունքներով ընտրված բժշկի կողմից զննության ենթարկվելու իրավունքը, բ) բժշկական զննության ենթարկվելու արդյունքում ձևավորված եզրակացության գաղտնիության ապահովումը քրեական վարույթն իրականացնող մարմնից, գ) ուժը կորցրած ճանաչել 2007 թվականի հունիսի 14-ի թիվ 818-Ն որոշումը, դ) համապատասխան փոփոխություն կատարել «Ձերբակալված և կալանավորված անձանց մասին» ՀՀ օրենքում,

2) օրենսդրական մակարդակով երաշխավորել անձին փաստացիորեն ազատությունից զրկելու պահի էլեկտրոնային ամրագրումը, այդ թվում՝ երաշխավորել, որ ա) եթե ձերբակալվածը ձերբակալման պահից 72 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա ենթակա է անհապաղ ազատ արձակման, բ) կալանավորման միջնորդությունը քննության առնելիս դատարանը պարտավոր է քննարկել անձի ձերբակալման իրավաչափությունը,

3) Եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածով ստանձնած արդյունավետ քննությունն ապահովելու պոզիտիվ պարտականությունների պատշաճ կատարման նպատակով ողջամտորեն որպես կանոն հարուցել քրեական գործ՝ խոշտանգումների, դաժան, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ենթարկվելու մասին համապատասխան տեղեկատվությունը ստանալու արդյունքում, այդ թվում՝ ա) քրեական գործի կարճումը, կասեցումը, քրեական հետապնդման դադարեցումը դիտարկել որպես բացառիկ միջոց, բ) օրենսդրական

մակարդակով ամրագրել քրեական հետապնդման առավելագույն ժամկետները, դրանց երկարացման բացառիկ հիմքերի սպառիչ ցանկը (փորձաքննության նշանակում, միջազգային իրավական օգնություն և այլն),

4) օրենսդրական մակարդակով ամրագրել, որ ազատությունից զրկված անձի, կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կամ մասնակցությամբ իրականացվող քննչական գործողությունների ընթացքը ենթակա է պարտադիր տեսաձայնագրման, այդ թվում՝ ա) տեսաձայնագրման կրիչը բացակայությունը կամ տեսաձայնագրության որևէ կերպ մոնտաժված լինելն անթույլատրելի է դարձնում ձեռք բերված ապացույցը, բ) ոստիկանության և կալանավայրերի հարցաքննության սենյակներում տեղադրյալ համապատասխան տեսաձայնագրող սարքեր,

5) օրենսդրական մակարդակով ամրագրել, որ արագացված դատական քննության կիրառումն արգելվում է այն դեպքերում, երբ քրեական գործի, առկա ապացույցների նախնական ուսումնասիրությունը, կամ ամբաստանյալի արտաքին տեսքը վկայում է այն մասին, որ ամբաստանյալը ենթարկվել է խոշտանգումների, դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի: